ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ

Աշխարհիկության գաղափարը Հնդկաստանի սահմանադրության մեջ. երկընտրանքների չափումները

ՌԱՋԿՈՒՄԱՐ ՍԻՆԳՀ
Մանդալի համալսարան, Հնդկաստան

Հնդկաստանի բաժանումն ընդգծեց աշխարհիկության զգալի կարևորությունը երկրում: Չնայած դրան, բնակչության տասներորդ մասը կազմող խոշոր մահմեդական փոքրամասնությունները շարունակում էին հանդիսանալ Հնդկաստանի քաղաքացիներ: Աշխարհիկությունը դարձավ հնդիկ ժողովրդի մանտրան. ժողովուրդ, որը հոգնել էր պառակտումից ու կրոնական խռովություններից և հատկապես Գանդիի սպանությունից հետո այլևս չէր ուզում լսել պառակտման մասին: Ստեղծված պայմաններում անխուսափելի էր անկախ Հնդկաստանի աշխարհիկ սահմանադրության ընդունումը, որը բոլոր կրոններին շնորհում էր հավասար ազատություն, իսկ քաղաքացիներին՝ հավասար իրավունքներ, և որը կարող էր տարբեր կրոնական համայնքների համախմբել մեկ ազգի ներքո: Հնդկաստանի սահմանադրությունը որևէ պատնեշ չէր դնում կրոնի և պետության միջև: Թեև այն մերժում էր կրոնական խտրականությունը, սակայն չէր արգելում պետությանը մասնակցել ժողովրդի կրոնական գործերին: Դա պետությանը հնարավորություն տվեց կարգավորել կամ սահմանափակել կրոնի հետ առնչվող աշխարհիկ գործունեությունը: Այսօր «աշխարհիկություն» բառը երբեմն գործածվում է որոշ աղավաղումներով: Չնայած հոդվածն ուսումնասիրում է աշխարհիկության ֆենոմենը Հնդկաստանում, այդ իրավիճակը քիչ թե շատ բնորոշ է նաև բազմակրոն և սոցիալ-մշակութային լայն շրջանակ ունեցող այլ հասարակությունների: Խնդրի վերաբերյալ Հնդկաստանի դեպքի ուսումնասիրությունը ոչ միայն կօգնի հասկանալ երկրի աշխարհիկ պատկերն, այլև ճանապարհ կհարթի Հնդկաստանի հետ նմանություններ ունեցող այլ երկրների վերաբերյալ հետագա ուսումնասիրությունների համար:

Բանալի բառեր
Աշխարհիկություն, Հնդկաստանի սահմանադրություն, կրոն, ազատություն և հասարակություն

Նախաբան

«Աշխարհիկ» բառն ամրագրված չէ Հնդկաստանի սահմանադրության մեջ, սակայն դա չի նշանակում, որ սահմանադրության հիմնադիր հայրերը կասկածի տակ են դրել Հնդկաստանի աշխարհի-

կությունը: Սահմանադրության ճարտարապետները երկար ժամանակ քննարկել են աշխարհիկության և անհատի կրոնական իրավունքների հարցը և համապատասխան դիտարկումներից հետո որոշել Հնդկաստանը դարձնել աշխարհիկ պետություն: Թեև Հնդկաստանի սահմանադրությունը հիմնված է աշխարհիկության կամ Դհարմա Նիրապեկշիտայի վրա, հասարակությունը մեծապես ուղղորդվում է կրոնով, իսկ կրոնական փառատոնները և ծեսերը կազմում են ժողովրդի առօրյայի մաս: Ի տարբերություն այլ երկրների՝ Հնդկաստանում աշխարհիկությունն ունի լիովին այլ նշանակություն:

Ինչպես նշում է Ջավահարլալ Ներուն իր ինքնակենսագրության մեջ, «Որևէ լեզվում հանդիպող որևէ բառ չի կարող ունենալ այնքան տարատեսակ մեկնաբանություններ, որքան «կրոն» բառը: Աշխարհիկությունը ևս չի կարող միատեսակ ընկալվել բոլորի կողմից»[1]: Նույնիսկ Սահմանադիր ժողովի անդամները կրոնին առնչվող հիմնարար իրավունքների վերաբերյալ քննարկումների ժամանակ աշխարհիկության գաղափարը դիտարկում էին որպես առավել արդյունավետ միջոց՝ տարբեր և հաճախ միմյանց հակասող տեսակետներ արտահայտելու համար: Սահմանադիր ժողովի անդամները կասկած չունեին, որ «աշխարհիկ պետություն», ինչպես նաև «աշխարհիկ» և «աշխարհիկություն» եզրույթները պետք է օգնեն հասկանալ, որ այդ սկզբունքը ենթադրում է հավասարության և ազատության սահմանադրական հայեցակարգ բոլոր կրոնների համար: Հիմնարար իրավունքներին առնչվող բոլոր դրույթներում նրանք առաջնորդվեցին այդ սկզբունքով՝ այդպիսով խուսափելով ինստիտուցիոնալացնել այնպիսի բառեր, որոնք արտահայտում են տարբեր և երբեմն հակասական իմաստներ:

Աշխարհիկության և Հնդկաստանի քաղաքացիների կրոնական իրավունքների վերաբերյալ քննարկումների ժամանակ հիմնադիր ժողովի որոշ անդամներ, այդ թվում՝ Կ. Տ. Շահը, Հ. Վ. Կամաթը, Թաջամուլ Հուսեյնը, Լաքշմի Կանտա Մահիթրան և Լոկնաթ Միշրան, ներկայացրեցին իրենց տեսակետները խնդրի վերաբերյալ: Շահը առաջարկեց ավելացնել նոր՝ 18-Ա հոդված՝ «Կրոնի ազատության իրավունք» խորագրով, որում կընդգծվի հետևյալը. «Հնդկաստանը,

[1] **Jawaharlal N.,** An Autobiography, Bombay, Allied Publishers, 1962, p. 378.

որպես աշխարհիկ պետություն, չպետք է առնչություն ունենա որևէ կրոնի, դավանանքի կամ հավատքի հետ և պետք է որդեգրի բացարձակապես չեզոք դիրքորոշում իր քաղաքացիների կամ Միության այլ անդամների որևէ դասի՝ կրոնին առնչվող հարցերի նկատմամբ»: Նա նաև հավելեց. «Ես պարզապես ցանկանում եմ ասել, որ պետությունը չպետք է առնչություն ունենա կոնկրետ հավատքի կամ դավանանքի հետ»[2]: Թաջամուլ Հուսեյնը առաջարկում էր վերացնել կաստաների անվանումները, նշաններն ու հագուստները. «Մենք չպետք է լինենք այնպիսի աշխարհիկ պետություն, որին ճանաչում են իր հագուստներով»: Թեև Կամաթը նախազգուշացրեց Սահմանադիր ժողովի անդամներին չընդունել որևէ կրոն, քանի որ դա կպառակտի երկիրը, նա նաև հստակեցրեց, որ դա չի ենթադրում հակակրոն կամ անկրոն պետություն: Աշխարհիկ պետությունն անաստված, անկրոն կամ հակակրոն պետություն չէ: Կամաթը կոչ էր անում կրթական հաստատություններում ներառել հոգևոր կրթության դասեր: Կրոնական քարոզչության իրավունքի վերաբերյալ քննարկումների ժամանակ Մաիթրան ընդգծեց, որ պետք է վերացնել ցանկացած կրոնական խտրականություն: Դա նշանակում է, որ որևէ կրոն չի վայելելու պետության հովանավորությունը: Միաժամանակ, նա նշում էր, որ նույնիսկ աշխարհիկ պետությունն ունի կրոնի կարիք: Կային նաև կարծիքներ, որ Հնդկաստանը պետք է դառնա հինդուիստական պետություն:

Սահմանադիր ժողովի ժամանակ Միշրան ներկայացրեց հինդուիզմի տեսակետը՝ մերժելով կրոնական քարոզչության իրավունքը. «Մենք Հնդկաստանը ճանաչել ենք աշխարհիկ պետություն: Արդյո՞ք դա չի նշանակում, որ մենք որևէ կրոնի հետ առնչություն չունենք: Ինչո՞ւ ենք այն դարձնում աշխարհիկ պետություն: Գուցե պատճառն այն է, որ կրոնն անհրաժեշտ չէ: Քանի որ Հնդկաստանն ունի բազմաթիվ կրոններ՝ հինդուիզմ, քրիստոնեություն, մահմեդականություն և սիկհիզմ, մենք չենք կարող որոշել, թե որն ընդունել: Ուստի, եկեք չունենանք կրոն: Ո՛չ, դա հնարավոր չէ: Եթե ընդունենք որևէ կրոն, ապա դա պետք է լինի հինդուիզմը, քանի որ դրան հարում է Հնդկաստանի ժողովրդի ճնշող մեծամասնությունը»: Նա նաև հավելեց.

[2] Constituent Assembly Debates, Vol. 7, pp. 815-816 and 835.

«Ժամանակի ընթացքում հասկանում եմ, որ «աշխարհիկ պետություն» արտահայտությունը միանշանակ չէ: Այն պարզապես երկրի հնագույն մշակույթը փոխանցելու միջոց է»: Չափազանց բարդ է հասկանալ «աշխարհիկության» հստակ իմաստը: Միշրան առաջարկում էր սահմանադրությունից հանել կրոնի իրավունքի վերաբերյալ դրույթները կամ առնվազն «իրավունք» բառի կողքին չօգտագործել «քարոզչություն» բառը»[3]: Սահմանադիր ժողովին ներկա հինդուիզմին հարող անդամները կտրականապես մերժում էին այն տեսակետը, որ կրոնական քարոզչությունը պետք է համարվի կրոնի ազատության օրինական բաղկացուցիչ: Սակայն անդամների ճնշող մեծամասնությունը համաձայն չէր այդ դիրքորոշման հետ: Մունշին նշում էր, որ եթե նույնիսկ «քարոզել» բառը չարծարծվի սահմանադրության մեջ, խոսքի ազատության համաձայն, որը երաշխավորվում է սահմանադրությամբ, ցանկացած կրոնական համայնք իրավունք ունի համոզել այլ անձանց միանալ իր հավատքին:

Սահմանադրական հիմքեր

Հնդկաստանի սահմանադրության համաձայն, կրոնի ազատության իրավունքն առանձնահատուկ կարևոր է կրոնական փոքրամասնությունների և նրանց բնականոն զարգացման համար: Աշխարհի սահմանադրությունների զգալի մասը, որոնք երաշխավորում են կրոնի ազատություն, այդ թվում՝ Շվեյցարիայի, նախկին ԽՍՀՄ-ի, Չինաստանի Ժողովրդավարական Հանրապետության և Ճապոնիայի սահմանադրությունները, ուղղակիորեն չեն երաշխավորում կրոնական քարոզչության իրավունքը՝ որպես հիմնարար իրավունք: «Քարոզել» բառը տեղ չունի որևէ սահմանադրության մեջ, որում այն առնչվում է կրոնական ազատության հետ: Թեև Սահմանադիր ժողովի անդամները կտրականապես դեմ էին այդ եզրույթի օգտագործմանը, քանի որ գտնում էին, որ դա ռիսկային է և կարող է օգտագործվել լայնամասշտաբ կրոնափոխման նպատակով, այդուհանդերձ, այդ տեսակետը չարժանացավ մեծամասնության հավանությանը: Անդամներից մեկը նշում էր. «Քարոզչությունը պարզապես արտահայտվելու

[3] Constituent Assembly Debates, Vol. 1, p. 90.

ազատություն է: «Կրոնափոխություն» բառը սահմանադրության մեջ ներառված չէ: Սահմանադրության ճարտարապետները հոգ են տարել այն մասին, որ որևէ մեկի համար չգործի կրոնափոխ լինելու անսահմանափակ իրավունք: Մարդիկ ունեն խղճի ազատություն, որի համաձայն կարող են կամավոր կրոնափոխ լինել: Դա չի կարող որևէ կերպ սահմանափակվել»: ՄԱԿ մարդու իրավունքների հռչակագրի համաձայն, «Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք: Այդ իրավունքը ներառում է դավանանքը կամ համոզմունքները փոխելու, միայնակ կամ կոլեկտիվ, հրապարակավ կամ գաղտնի քարոզելու, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի և ծիսակատարու-թյունների միջոցով արտահայտվելու ազատություն»[4]: Ուստի, Հնդկաստանում կրոնի ազատության շրջանակը բավական լայն է:

Երկար բանավեճերից և քննարկումներից հետո Սահմանադիր ժողովն «աշխարհիկություն» եզրույթն առաջին անգամ սահմանեց 1948թ. ապրիլի 3-ին. «Չնայած ժողովրդավարության պատշաճ գործարկման և ազգային միասնության զարգացման ու համերաշխության համար անհրաժեշտ է, որ կոմունալիզմը դուրս մղվի Հնդկաստանի կյանքից, այդուհանդերձ, Սահմանադիր ժողովը գտնում է, որ որևէ համայնքային կազմակերպություն, որն իր սահմանադրությամբ կամ պաշտոնատար անձանց և մարմիններին շնորհված հայեցողական լիազորությունների միջոցով կրոնի, ռասայի, կաստայի կամ դրանցից որևէ մեկի հիմքի վրա իրականացնում է անդամակցություն, պետք է իրավունք ունենա ներգրավվել բացառապես համայնքի կրոնական, մշակութային, սոցիալական և կրթական կարիքների բարելավման համար անհրաժեշտ միջոցառումներում: Անհրաժեշտության դեպքում պետք է ձեռնարկվեն օրենսդրական ու վարչական բոլոր միջոցներն այլ գործունեության իրականացումը կանխելու համար»[5]: Հնդկաստանի սահմանադրության դրույթներում հստակեցված է Հնդկաստանի աշխարհիկության էությունը, որը լայն իմաստով ենթադրում է.

---

[4] **Rajarajan R.,** Secularism in Indian Politics: Theory and Practice, *The Indian Journal of Political Science*, 2007, **LXVIII**, 2, April-June (Meerut), p. 405.
[5] Constituent Assembly Debates, Vol. 8, p. 316.

1. աստվածապետական կամ կիսաաստվածապետական պետության մերժում,
2. կրոնի հռչակում որպես անհատի կամ խմբի գործ,
3. բոլոր քաղաքացիների հավասարություն՝ անկախ իրենց կաստայից կամ դավանանքից,
4. պետության իրավունքը միջամտելու տարբեր համայնքների կրոնական միջոցառումներին՝ խաղաղ համագոյակցության ապահովման և մշակութային զարգացման նպատակով:[6]

Կրոնի ազատությունը, որը երաշխավորվում է Հնդկաստանի սահմանադրությամբ, չի սահմանափակվում իր քաղաքացիներով, այլ տարածվում է բոլորի վրա: Այդ կետը նշվում էր նաև Գերագույն դատարանի՝ «Ռաթիլալ Փանչանդն ընդդեմ Բոմբեյի պետության» դատական գործի առնչությամբ: Դա կարևոր իրադարձություն էր, քանզի այդ ժամանակ օտարերկրյա քրիստոնյա միսիոներների զգալի մասն այլ կրոնների հետևորդներին քարոզում էր իր հավատքը:

1950թ. հունվարի 26-ը նշանավորվեց կարևոր իրադարձությամբ: Հնդկաստանի սահմանադրությունը մտավ ուժի մեջ: Սահմանադրությունն օրենքների և կանոնների համախումբ է, որը սահմանում է պետության կառավարման մեխանիզմը: Այն սահմանում և որոշում է տարբեր հաստատությունների և կառավարման ոլորտների՝ գործադիր, օրենսդիր, դատական, կենտրոնական, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխհարաբերությունները: Հնդկաստանի սահմանադրությունն իդեալիզմի և ռեալիզմի համադրություն է: Այն ստեղծելու համար դրա մշակողները հաշվի են առել ժողովրդավարական գործոնների մի ամբողջ համախումբ: Նրանք կատարել են մանրակրկիտ վերլուծություն, դիտարկել փաստարկներ ու հակափաստարկներ: Արդյունքում, սահմանադրությունը հիմք դարձավ, որ Հնդկաստանի ժողովուրդը, հսկայական ջանքեր գործադրելով, միասին կառուցի նոր, ազատ Հնդկաստան: Պանդիտ Ներուն պնդում էր, որ սահմանադրությունը ոչ միայն իրավական, այլև սոցիալական ու քաղաքական փաստաթուղթ է և, որպես այդպիսին, այն պետք է արտացոլի ժողովրդի ձգտումներն ու

[6] **Gani H. A.,** Muslim Political Issues and National Integration, New Delhi, Sterling, 1978, p. 178.

ցանկությունները, ինչպես նաև ծառայի որպես արդյունավետ գործիք՝ սոցիալ-տնտեսական հեղափոխություն իրականացնելու համար[7]: Սոցիալիզմի և աշխարհիկության նպատակը, որը նրանք փորձել էին նախկինում իրականացնել և զարգացնել ապագայում, պետք է ավելի հստակ արտացոլվեր սահմանադրության մեջ: Զգտելով լիակատար վստահություն ձեռք բերել կրոնական փոքրամասնությունների շրջանում՝ Սահմանադիր ժողովն ընդունեց նաև այնպիսի հոդվածներ, որոնք վերաբերում էին բացառապես կրոնի ազատության իրավունքին:

Կրոնի ազատության վերաբերյալ դրույթներ

Հնդկաստանի սահմանադրության 25-30-րդ հոդվածները երաշխավորում են կրոնի ազատություն: Առաջին չորս հոդվածներն (25, 26, 27, 28) ուղղված են կրոնական փոքրամասնությունների իրավունքների լիակատար պաշտպանությանը: Դրանք Սահմանադիր ժողովի ձևավորած Փոքրամասնությունների հանձնաժողովի հետ գրեթե միաձայն համաձայնության արդյունք են: Սահմանադրության 25-րդ հոդվածի 1-ին մասը բոլորի համար ապահովում է խղճի ազատություն և կրոնի, դավանանքի, երկրպագության և քարոզչության իրավունք:

Սահմանադրությունը հռչակում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ոչ միայն հարել ցանկացած կրոնի, այլև բացահայտ կերպով արտահայտել իր հավատքը և դրա վարդապետությունը քարոզել այլ անձանց: Այս հոդվածի շրջանակը բավական լայն է և բազմիմաստ: Հոդվածում նշվում է, որ «պետությունը կամ կառավարությունը չի կարող աջակցել մեկ կրոնի կամ որևէ կրոն ստորադասել մյուսին: Հնդկաստանում որևէ կրոն չի վայելի պետության բացարձակ հովանավորությունը: Սահմանադրության 25-րդ հոդվածի 2-րդ կետն անդրադառնում է կրոնական գործերին պետության միջամտությանը: Այն խիստ սահմանափակում է 25-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված իրավունքները՝ արտացոլելով հնդիկ հասարակության առանձնահատուկ կարիքները: Սահմանա-

[7] **Markandan K.C.,** The Preamble-Key to the Minds of the Makers of Indian Constitution. New Delhi, National Publishing House, 1984.

դրրության մշակողները 25-րդ հոդվածի 2-րդ կետը դարձրել են 25-րդ հոդվածի 1-ին կետի մաս՝ կրոնի ազատությունը սահմանափակելով երեք հիմնական գործոնով՝ հասարակական կարգ, բարոյականություն և առողջություն։ «Հինդուիզմի կրոնական հիմնադրամի հանձնակատարն ընդդեմ Լ. Տ. Սվամիարի» դատական գործի առնչությամբ Հնդկաստանի Գերագույն դատարանը հայտարարել է, որ «Սահմանադրության 25-րդ հոդվածը երաշխավորում է հասարակական կարգին, առողջությանն ու բարոյականությանը ենթակա յուրաքանչյուր անհատի ազատություն՝ ոչ միայն հարելու իր դատողության և խղճի կողմից ընդունելի կրոնական դավանանքի, այլև արտահայտելու իր հավատքն այնպես, ինչպես համարում է պատշաճ, և քարոզելու կամ տարածելու իր գաղափարները՝ մյուսներին ուսուցանելու նպատակով։ «Կրոնի պրակտիկա» արտահայտությունը նշանակում է, որ սահմանադրությունը ոչ միայն պաշտպանում է կրոնական կողմնորոշման ազատությունը, այլև կրոնին համապատասխան գործելու իրավունքը[8]։

Սահմանադրության 26-րդ հոդվածը երաշխավորում է կրոնական գործերի կազմակերպման ազատությունը։ Հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր կրոնական աղանդ իրավունք ունի

1. ստեղծել և պահպանել հաստատություններ՝ կրոնական և բարեգործական նպատակներով,
2. ինքնուրույն կազմակերպել իր կրոնական գործերը,
3. ունենալ և ձեռք բերել շարժական և անշարժ գույք,
4. օրենքով սահմանված կարգով տնօրինել այդ գույքը։

«Կրոնական աղանդ» եզրույթը սահմանված չէ սահմանադրության մեջ, սակայն Հնդկաստանի Գերագույն դատարանը ընդունում է Օքսֆորդի բառարանում տրված սահմանումը։ Դրա համաձայն, աղանդն «անհատների խումբ է, ովքեր միավորվել են մեկ անվան ներքո՝ որպես ընդհանուր հավատք, կազմակերպություն և տարբերակիչ անվանում ունեցող կրոնական խումբ»։ Մի շարք դատական գործերի առնչությամբ Գերագույն դատարանը վճռել է, որ Արյա Սամաջը, Անանդմարգան, Վաիշանավեն՝ Մադավաչարյայի և այլ

[8] **Pylee M. V.,** India's Constitution. New Delhi, Asia Publishing House, 1947, p. 127.

կրոնական ուսուցիչների հետևորդները, ներկայացնում են ոչ թե առանձին կրոններ, այլ կրոնական աղանդներ, որոնք պաշտպանված են սահմանադրության 26-րդ հոդվածով։ Սակայն կրոնական աղանդի՝ իր կրոնական գործերն ինքնուրույն կազմակերպելու իրավունքը ենթակա է 25 (2) (բ) հոդվածով երաշխավորվող ցանկացած օրենքի։ Դրա արդյունքում, հինդուիստական հասարակական տաճարի դռները բացվեցին հինդուների բոլոր դասերի և շերտերի համար։ Դրույթի նպատակն էր հինդուների տարբեր կաստաների միջև վերացնել անհավասարության և անհամաձայնության հնարավոր պատճառները։

Սահմանադրության 25-րդ և 26-րդ հոդվածները անհատին շնորհում են կրոնական ազատության լայն իրավունքներ։ Սակայն վերջիններս բացարձակ չեն և ենթակա են որոշ սահմանափակումների։ Այդ հոդվածների տեքստը վերաբերում է սահմանադրության դրույթներին, ուստի ենթակա է հասարակական կարգին, բարոյականությանն ու առողջությանը վերաբերող սահմանափակումների։ Սահմանադրության 25-րդ հոդվածի առնչությամբ կա երկու բացառություն։ Նախ, այդ ազատությունը սահմանափակվում է Սահմանադրության 3-րդ մասի մյուս դրույթներին։ Բացի այդ, 2 (3) կետի համաձայն, այդ հոդվածում առկա որևէ կետ չի կարող ազդել գործող օրենքի վրա կամ խոչընդոտել պետությանը ընդունել ցանկացած օրենք, որը

1. կարգավորում կամ սահմանափակում է կրոնին առնչվող տնտեսական, ֆինանսական, քաղաքական կամ այլ աշխարհիկ գործունեություն,
2. ապահովում է սոցիալական բարեկեցություն կամ հինդուիստական կրոնական հաստատությունները դարձնում է հասանելի հինդուների տարբեր դասերի և շերտերի համար։

Հնդկաստանի դատական համակարգը նույնպես պաշտպանում է այն տեսակետը, որ կրոնի ազատությունը բացարձակ չէ։ «Մասուդ Ալամն ընդդեմ Ոստիկանական հանձնաժողովի» գործի առնչությամբ դատարանը վճռեց, որ աղոթքի կոչեր անելու նպատակով օգտագործվող էլեկտրական բարձրախոսների վրա արգելք դնելն արդարացված է։ Յուրաքանչյուր կրոն ենթակա է քարոզչության։ Սակայն սահմանադրության 25-րդ հոդվածի համաձայն, մարդաշատ և աղմկոտ վայրերում արգելվում է բարձրախոսների միջոցով իրականացնել

քարոզչություն, քանզի դա վնաս է հասցնում հասարակության բարոյականությանը, առողջությանն ու հասարակական կարգին: Ձայնի բարձրության պատճառով բարձրախոսը կարող է մարդուն դրախտի փոխարեն դժոխք տանել[9]: Հնդկաստանի Քրեական Օրենսգրքի (ՀՔՕ) 15-րդ գլխի 295-298 մասերն անդրադառնում են կրոնական անարգանքներին, այն է՝ պաշտամունքի վայրը վնասելը կամ աղտոտելը՝ այս կամ այն կրոնն անարգելու նպատակով, հուղարկավորության վայրեր կրոնական որևէ խմբի մուտքը խոչընդոտելը և այլն: Նույնիսկ այն դեպքերում, երբ օրինազանցի կրոնը թույլատրում է նման գործողություններ, օրենքի համաձայն դրանք հանցավոր արարքներ են:

Հնդկաստանի սահմանադրության 27-րդ հոդվածն ապահովում է հավելյալ պաշտպանություն կրոնական գործունեության իրականացման համար՝ կրոնի զարգացման և պահպանման համար նախատեսված միջոցներից հարկեր չպահելով, իսկ 28-րդ հոդվածը թույլատրում է կրթական հաստատություններում կրոնի դասընթաց-ների միջոցով քարոզել այս կամ այն կրոնը: Հոդվածում նշվում է, որ 1) կրոնի դասընթացներ չպետք է անցկացվեն այն կրթական հաստատություններում, որոնք ֆինանսավորվում են բացառապես պետական բյուջեից, 2) 1-ին կետում նշվածը չի վերաբերում միայն այն կրթական հաստատություններին, որոնք պետության լիակատար վերահսկողության ներքո են, սակայն հանդիսանում են նվիրատվու-թյուն կամ վստահված սեփականություն՝ պայմանով, որ նման հաստատություններում դասավանդվի կրոն, 3) պետության կողմից ճանաչված կամ պետության միջոցներով ֆինանսավորվող կրթական հաստատություններ հաճախող որևէ անձի չի կարող պարտադրվել հաճախել կրոնի դասընթացների կամ մասնակցել երկրպագության, որն անցկացվում է տվյալ հաստատությունում, եթե այդ անձը կամ վերջինիս անչափահաս լինելու դեպքում՝ նրա խնամակալը, չեն տվել իրենց համաձայնությունը: Սահմանադրության 29-րդ և 30-րդ հոդվածները երաշխավորում են մշակութային և կրթական իրավունք-ներ՝

[9] Հնդկաստանի Սահմանադրություն, հոդված 18:

1) առանձին լեզու, գիր կամ մշակույթ ունեցող Հնդկաստանի յուրաքանչյուր քաղաքացու համար,

2) ցանկացած կրոնի, ռասայի, կաստայի պատկանող կամ ցանկացած լեզվով խոսող յուրաքանչյուր քաղաքացու համար,

3) ցանկացած կրոնական կամ լեզվական փոքրամասնության համար,

4) ցանկացած կրոնական կամ լեզվական փոքրամասնության կողմից ղեկավարվող կրթական հաստատության համար[10]:

Սահմանադրության 29-րդ և 30-րդ հոդվածներում ճանաչվում և պաշտպանվում են տարբեր լեզուներ և դավանանք ունեցող անձանց իրավունքները՝ այդպիսով արտացոլելով Հնդկաստանի աշխարհիկության էությունը: Վերջինիս հիմքում ընկած է այն գաղափարը, որ ընդհանուրի հիմքում ոչ թե խումբն է, այլ անհատը: Անբաժանելի միավորը հակադրվում է պետությանը, որը նրա առջև դնում է որոշակի պարտավորություններ և պատասխանատվություն: Փոխարենը, պետությունը անհատի համար երաշխավորում է իրավունքներ և արտոնություններ: Անձ-պետություն փոխհարաբերության հանրագումարն արտահայտում է քաղաքացիության էությունը: Սահմանադրության մեջ կան մի շարք դրույթներ, որոնք անդրադառնում են հասարակական ոլորտներում քաղաքացի-պետություն փոխհարաբերությանը: Ներառված են նաև այնպիսի դրույթներ, որոնք վերաբերում են քաղաքական գործունեության անաչառությանը:

Շարժունություն և երկընտրանքներ

Հնդկաստանում աշխարհիկության ընդհանուր համակարգը մեծ առաջընթաց է գրանցել: 1976թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում նախաբանում ամրագրված «ինքնիշխան, ժողովրդավարական հանրապետություն» արտահայտությունը վերանվանվեց «ինքնիշխան, սոցիալիստական, աշխարհիկ, ժողովրդավարական հանրապետության»: Սահմանադրության մեջ առաջին անգամ ներկայացվեց «աշխարհիկ» բառը: 1976թ. հոկտեմբերի 25-ին

[10] **Bharatiya V. P.,** Religion - State Relationship and Constitutional Rights in India. New Delhi, Deep and Deep Publishers, 1987, p. 360.

խորհրդարանում օրինագծի քննարկման ժամանակ Օրենքի և Արդարադատության նախարար Հ. Ռ. Գոխալեն իր ելույթում արդարացրեց «սոցիալիզմ և աշխարհիկություն» բառերի ներառումը սահմանադրության մեջ՝ հղում կատարելով 1931թ. Կարաչիում Կոնգրեսի ընդունած բանաձևին: Պանդիտ Ներուն, ում շնորհել էին քաղաքական ազատություն, որպես առաջիկա նպատակ բանաձևում հռչակեց երկրում սոցիալ-տնտեսական հեղափոխության իրականացումը. «Սոցիալիզմի և աշխարհիկության նպատակը, որը մենք միշտ հետապնդել ենք և փորձել կյանքի կոչել, ավելի ճշգրիտ ու հստակ կերպով է ներկայացվելու մեր Սահմանադրության գլխավոր մասում՝ Նախաբանում»: Սարդար Սվարան Սինգհը նշում էր «...Աշխարհիկն այժմ այնպիսի բառ է, որը կարծում եմ դարձել է հնդկական լեզուների մի մասը: Հնդկաստանի ժողովուրդն իր տարբեր լեզուներում օգտագործում է «աշխարհիկ» բառը, քանի որ այն ձեռք է բերել կոնկրետ նշանակություն, այն է՝ ըստ գործող սահմանադրության, տարբեր կրոնների հարող մարդիկ հավասար են օրենքի առջև»[11]: Օրինագիծը յոթ օր քննարկելուց հետո՝ Լոկ Սաբհան (խորհրդարանի ստորին պալատը) այն ընդունեց 1976թ. նոյեմբերի 2-ին, իսկ Ռաջյա Սաբհան (խորհրդարանի վերին պալատը)՝ 1976թ. նոյեմբերի 11-ին: Ընդհանուր առմամբ, աշխարհիկություն» բառի ներառումը Սահմանադրության նախաբանում արժանացավ երկու պալատների հավանությանը: Նախաբանում նշվում էր. «Մենք՝ Հնդկաստանի ժողովուրդս, 1976թ. դեկտեմբերի 18-ին հայտարարում ենք, որ 1949թ. նոյեմբերի 26-ին ընդունված Սահմանադրությամբ հռչակում ենք Հնդկաստանը որպես աշխարհիկ սոցիալիստական պետություն»: Նշվում էր նաև, որ սահմանադրության մեջ եզրույթի ներառման հիմքում բոլոր կրոնների համար հավասարության ապահովումն է:

«Աշխարհիկ» եզրույթը, որը մերժում է աստվածապետությունն ու պետական եկեղեցին և ընդունում բոլոր կրոնների համար հավասարությունը՝ որպես անկախ Հնդկաստանի պետական քաղաքականություն, նախկինում որևէ առնչություն չուներ սահմանադրության և

[11] **Markandan K.C.,** The Preamble-Key to the Minds of the Makers of Indian Constitution, New Delhi, National Publishing House, 1984, p. 63.

օրենքների մեկնաբանության հետ: Մինչդեռ «աշխարհիկություն» բառը բավական անորոշ է և ներկայացվել է 42-րդ սահմանադրական փոփոխություններով, սահմանադրության 25-30-րդ հոդվածները, որոնք վերաբերում են կրոնի և կրոնական գործերի կազմակերպման ազատությանը, ունեն ավելի հստակ ձևակերպումներ: Աշխարհիկ պետության իդեալները հստակ ներկայացված են Հնդկաստանի սահմանադրության մեջ և վերջինիս դրույթները զգալի չափով կիրառվում են: Սակայն անկախությանը հաջորդող իրադարձություն-ների արդյունքում Հնդկաստանի աշխարհիկությունը բախվել է բազում մարտահրավերների: Հնդկաստանն ունի մի շարք ավանդույթներ, որոնք մասամբ սերել են երկրում գոյություն ունեցող տարբեր կրոններից: Չնայած բազմաթիվ ավանդույթների գոյությանը՝ Հնդկաս-տանը կարողացել է պահպանել իր աշխարհիկ բնույթը:

Այդուհանդերձ, ոչ կառավարական տարբեր ինստիտուտների, կուսակցությունների (հատկապես ազգային, որոնց ազատ կարող է անդամակցել յուրաքանչյուր համայնք) գործունեության վերլուծությու-նը ցույց է տալիս, որ աշխարհիկության ոգին օր օրի աղավաղվում է: Հնդիկներն իրենց մոտեցումների և տեսակետների առումով այնքան էլ աշխարհիկ չեն: Աշխարհիկության սկզբունքների ընդհանրացումը պետք է նպաստի նրան, որ աշխարհիկությունը չվերածվի կրոնական խմբերի գերիշխանության և տիրապետության ինստիտուցիոնալաց-ված քաղաքականության: Անհրաժեշտ է մշակել համաձայնեցված քաղաքականություն, որը հիմնված կլինի փոխադարձ հարգանքի և համընդհանուր սկզբունքների, այլ ոչ օրենքով պաշտպանված տարբեր դավանանքների վրա: Անձնային և պետական արժեքների վրա հիմնված այդպիսի սկզբունքների զարգացումն ու դրանց նկատմամբ հավատարմությունը կարևոր է աշխարհիկության համար: Դա կօգնի, որպեսզի վերջինս դառնա սոցիալական և համայնքային համընդ-հանուր գաղափարախոսություն, այլ ոչ բացառապես հասարակության կառավարման քաղաքական գործիք:

Եզրակացություն

Հնդկաստանի քաղաքական մշակույթը, ինչպես մյուս զարգացող երկրների դեպքում է, դեռևս ձևավորման փուլում է: Այն պատմական, աշխարհագրական, սոցիալ-տնտեսական, ժամանակակից և հնագույն սոցիալական կառույցների, հին ու նոր քաղաքական գաղափարախոսությունների, և, որ առավել կարևոր է, քաղաքական անտարբերության և խաղաղության պրակտիկայի ու ավանդույթի համադրման արդյունք է: Հնդկական քաղաքական մշակույթում կրոնական արժեքների նկատմամբ հավատարմությունն ունի ամուր հիմքեր: Քաղաքական և սոցիալ-տնտեսական փոփոխություններն արձագանքում են կաստաների պահանջներին: Սահմանադրությունը կաստաների միջև տարբերակում չի դնում, սակայն քաղաքական ինստիտուտները շարունակում են երկիրը բաժանել կաստաների և ենթակաստաների: Արդյունքում, Հնդկաստանի քաղաքական համակարգը դարձել է իռացիոնալ քաղաքական գործիչների կենտրոն, ովքեր իրենց իշխանությունն ու տնտեսական շահն ապահովելու համար շահարկում են պետական ապարատը՝ առաջացնելով սոցիալական հակամարտություն: Անջատողական շարժումները, կաստաների պայքարը, հինդու ազգայնականությունը և մեծամասնություն-փոքրամասնություն տարանջատումն՝ ըստ մշակութային ինքնության, ընդգծվել է՝ հաճախ ավելի սրվելով կուսակցությունների և առաջնորդների ընտրական պայքարի ժամանակ: «Հինդուների-մուսուլմանների-դալիթների», այսպես կոչված, «ձայների բանկի» քաղաքականությունը և միմյանց մեղադրելու քաղաքական խաղը դարձել է Հնդկաստանի քաղաքական մշակույթի անբաժանելի մասը: Հնդկաստանի քաղաքական մշակույթը բախվում է մի շարք խնդիրների, այդ թվում՝ կոռուպցիա, ծայրահեղ կենտրոնացում, քաղաքական քրեականացում, նահանջող աշխարհիկություն, կրոնի հիման վրա շովինիզմի ուժեղացում: Հնդկաստանի քաղաքական մշակույթը չի կարողացել կանխել համայնքային բռնությունները, էթնիկ հակամարտությունները և քաղաքական ապստամբությունները: Աշխարհիկացումը չի նշանակում, որ կրոնական հաստատությունները կդադարեն գոյություն ունենալ: Այն պարզապես նշանակում է, որ

դրանք կդադարեն իրենց մեջ ներառել և կարգավորել հասարակական մյուս բոլոր ինստիտուտները։

Secularism in Indian Constitution: Dimensions of Dilemmas

RAJKUMAR SINGH
B. N. Mandal University, India

The coming of the partition emphasised the great importance of secularism. Not with standing the partition a large Muslim minority, constituting a tenth of the population of India, continued to be citizens of India. Secularism became the mantra of the Indian nation, a nation exhausted by partition and sectarian riots and above all the assassination of Gandhi did not want any more divisive talk. In the circumstances, a secular constitution of independent India, under which all religions could enjoy equal freedom and all citizens equal rights, and which could well together into one nation the different religious communities became inevitable. Our Constitution did not erect any ‘wall of separation' between religion and the State. While prohibiting religion- based discrimination between the citizens, it did not prevent the state from participating in the people's religious affairs. It enabled the State to generally "regulate or restrict secular activity associated with religion. As of today the use and misuse of the word secularism/religion continues with its many abusive forms and styles. Although the paper aims to study Indian phenomenon of secularism, more or less, the same situation is prevailing in others societies having multireligious and socio-cultural framework. The study of Indian elements on the issue will not only help solve the country's secular perspective, but also prove path-breaking for future works to be done by scholars in context of other countries, India alike.